ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

29 հոկտեմբերի 2026թ. թիվ 1240

Կ.ԱԴԱՄՅԱՆԻՆ ԵՎ Գ.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով 2026 թվականի հոկտեմբերի 29-ի գործուղման առաջադրանքները՝

Հ ր ա մ ա յ ն ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կարինե Ադամյանին և նույն վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Գալուստ Մելիքսեթյանին ս/թ հոկտեմբերի 30-ին մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում անցկացվող ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի (CBD) Կողմերի 17-րդ համաժողովին՝ COP17-ին մասնակցելու համար:

2. Գործուղումն իրականացնել «Hyundai Tucson 2.0, 2012թ.» մակնիշի 496 CS 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Արտավազդ Բեջանյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կարինե Ադամյանին և նույն վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Գալուստ Մելիքսեթյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

10/29/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Signed by: DALLAKYAN MERI 5303860493 Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր